«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

.....

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Ավչյան
/անուն, ազգանուն/

«Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
/դպրոց/

.....

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան
/անուն, ազգանուն/

ԱՐՄԱՎԻՐ- 2022

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- **3**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ---------- **7**

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ---------- **10**

ԳԼՈՒԽ **1**

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ---------- **11**

ԳԼՈՒԽ **2**

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐԸ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ---------- **16**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ---------- 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ---------- **2**0

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տու՛ր մարդուն մի ձուկ, և նա կուշտ կլինի մեկ օր:
Սովորեցրու՛ մարդուն ձուկ բռնել, և նա կուշտ կլինի ամբողջ կյանքում :
Արևելյան իմաստություն

Ուսուցումն ու դաստիարակությունը անխզելի միասնություն են կազմում և իմաստալից է խոսել միայն ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման մասին:

Թեև ուսուցմամբ կարելի է դաստիարակչական որոշակի խնդիրներ լուծել, սակայն մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների պատվաստումն իրականացվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայությունն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընթացի ընդհանուր կուլտուրան է, կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, սովորողների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ի վերջո՝ օրենքի գերակայության հաստատումն ու նրա հարգումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից:

«Մնալով որպես քաղաքակրթության նվաճումների, սոցիալական փորձի ու գիտելիքի փոխանցման ավանդական միջոց՝ կրթությունը վերաճել է հասարակության հումանիտարացմանը նպաստող գործոնի և միտված է զարգացնելու մարդու հոգևոր արժեքները, հասարակական համակեցության, հանդուրժողականության, համագործակցային որակները և ձևավորելու ապագայի մարտահրավերներին պատրաստ մարդ»: Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը: Այս ամենին զուգահեռ կրթությունը պետք է լինի մատչելի, և, իհարկե, հասանելի և ըմբռնելի բոլորի համար: Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես հասարակության զարգացման ու

առաջընթացի հիմնական միջոցներ, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան» (1989թ., ՄԱԿ) և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը» (2002թ., Դակար)։

Այսօր անկախ Հայաստանում ազգային բովանդակությամբ կրթություն է իրականացվում, և դպրոցն է որոշում կրթության ազգային բովանդակությունը: Դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներով էլ միաձուլվում են ուսուցումն ու դաստիարակությունը։

Առանձնապես կարևորելով հանրակրթության պետական կրթակարգում ընդգծված պահանջը կարողությունների, հմտությունների և որոշակի արժեքային համակարգի ձևավորման վերաբերյալ՝ այս հետազոտական աշխատանքում կանդրադառնանք այն հարցին, թե ինչպես առարկայի դասավանդմանը զուգահեռ սովորողների մեջ ձևավորել արժեքային համակարգ։ Այս հարցը պիտի չանտեսվի նաև յուրաքանչյուր դասի նպատակները նշելիս ու ձևակերպելիս: Դրանք ընդհանուր բնույթ չպիտի ունենան, այլ խիստ որոշակի։ Դասարան մտնելուց առաջ ուսուցիչը պետք է հստակ սահմանի այն հարցի պատասխանը, թե արդյոք որո՞նք են լինելու այդ դասի կրթական և դաստիարակչական կողմերը: Դասի յուրաքանչյուր թեման մատուցելուց առաջ՝ նախապատրաստվելով դասին, ուսուցիչը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

- Ի՞նչ սովորեցնել,
- Ինչպե՞ս սովորեցնել,
- Ինչու՞ սովորեցնել։

Հնարավորությունները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր նորմալ երեխայի ուղեղը հնարավորություն է տալիս զարգացնել այն անհրաժեշտ ընդունակությունները, որոնք պետք են դպրոցում հաջողությամբ սովորելու համար։ Իհարկե, մեկը համեմատաբար հեշտ է տիրապետում գիտելիքների սիստեմին, մյուսը՝ պակաս հեշտությամբ։ Բացի այդ հեշտությունն ապահովող ընդհանուր մտավոր ընդունակություններից, մարդիկ միմյանցից տարբերվում են նրանց հաջողությունը գործունեության այսինչ կոնկրետ բնագավառում։ Մեկն, ասենք, ընդունակ է

հատկապես երաժշտության մեջ, մյուսը՝ մաթեմատիկայի, երրորդը՝ նկարչության և այլն։

Սակայն կյանքի փորձը ցույց է տալիս, որ միևնույն ուսումն ու դաստիարակությունն ստացած, տվյալ գործի վրա նույնքան ջանք ու ժամանակ ծախսած մարդիկ հասնում են տարբեր արդյունքների։ Նրանք տարբեր արձագանքներ են տալիս կյանքի միևնույն երևույթներին, տարբեր են նրանց աշխարհայացքը, թեպետ սովորել են նույն դասարանում, սերտել են նույն դասագրքերը, ուսուցիչները նույն արժեքային համակարգերն են ձևավորել նրանց մեջ։ Բայց նախ կանգ առնենք այն փաստի վրա, որ ժամանակի ընթացքում փոխվում է նաև արժեքային համակարգի բնութագիրը։ Մենք կարող ենք պնդել, որ յուրաքանչյուր արժեքային համակարգ համապատասխանում է հասարակության զարգացման որոշակի մակարդակի։

Հետազոտության նպատակն է բացահայտել, թե սովորողների մեջ ինչպիսի արժեքային համակարգ է ձևավորվում առարկաների դասավանդման ընթացքում։

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,
2. բացահայտել արժեքային համակարգի ձևավորման ուղիներն ու միջոցները,
3. բացահայտել, այն առարկան կամ առարկաները, որոնց ընթացքում արժեքային համակարգն ավելի արդյունավետ է ձևավորվում կամ որը լավագույնս է նպաստում արժեքային համակարգի ձևավորման համար։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ/ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

Հետազոտությունը կատարել ենք բոլոր առարկաների ընթացքում՝ համագործակցելով կոլեգաների հետ, կապը հաստատելով ծնողների և ընտանիքի անդամների հետ։

Մեծ ուշադրություն ենք դարձրել սովորողների վարքին և բնավորությանը հետազոտությունից առաջ և հետո։

Մենք նախընտրել ենք ինտերակտիվ ուսուցումը։

Հետազոտումը կատարել ենք՝ կիրառելով մի շարք ինտերակտիվ մեթոդներ.

գաղտնազերծում, սատանայի վկա, քառաբաժան, խաթարված հերթականություն, կիսափակ հարցաթերթիկներ և այլն.

Արժեքային համակարգի ձևավորումն արդեն դաստիարակություն է, իսկ դաստիարակության նպատակի էությունը կատարյալ մարդու ձևավորումն է, նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Այս կարևորագույն խնդիրը միշտ էլ եղել է առաջադեմ մանկավարժների ուշադրության կենտրոնում, նրանցից շատերը նույնացրել են «դաստիարակություն» և «արժեքային համակարգի ձևավորում» եզրույթները:

Ուսումնասիրելով մանկավարժության պատմությունը, ծանոթանալով հայ և օտար ազգերի մանկավարժների հայացքներին, առաջադրած սկզբունքներին, մեթոդաբանությանը՝ առանձնացրել ենք մի քանիսին, ովքեր ուսումնառության մեջ կարևորություն են տվել արժեքային համակարգի ձևավորմանը:

Հին աշխարհի փիլիսոփաներն անդրադարձել են մարդու համակողմանի և ներդաշնակ զարգացման գաղափարին: Նրանք կոչ էին անում աճեցնել հոգեպես ու մարմնապես գեղեցիկ սերունդ: Այս պահանջի հիմքում ընկած էր հոգեկան զարգացման և մարմնական գեղեցկության գաղափարը: Նրանք գտնում էին, որ մարդը դրան կարող է հասնել հոգևոր մշակույթին, արվեստին, մարմնամարզությանը հաղորդակցվելով:

Վաղ միջնադարում փոխվեցին այսպիսի ընկալումները և մոռացության տրվեց մարդու համակողմանի զարգացման մասին հին աշխարհի մեծ մտածողների գաղափարը: Սակայն վերածննդի դարաշրջանում մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարը նոր ձևակերպում ստացավ: Հումանիստ մանկավարժները կոչ արեցին հաճույք ստանալ գեղարվեստական գրականությունից, արվեստից, երաժշտությունից: Սակայն միայն ուսնոր խավը կարողացավ ապահովել իրենց երեխաների բազմակողմանի կրթությունն ու դաստիարակությունը: Սոցիալիստները փորձեցին գտնել հնարներ բոլոր խավի երեխաների զարգացումն ու կրթությունն ապահովելու համար: Դրանց շարքերում էին Թ. Մորին, Թ. Կամպանելլային, Սեն- Սիմոնը, Շ. Ֆուրյեին, Ռ. Օուենին: Նրանք այն կարծիքին էին,

որ ճիշտ դաստիարակության միջոցով կարելի է ստեղծել բավականության և արդարացիության սկզբունքների վրա հիմնված հասարակություն: Նրանք կարևորեցին աշխատանքային դաստիարակությունը, ինչը մինչ այդ եղել էր անտեսված:

Աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման, արժեքային համակարգի ձևավորման գաղափարը հետաքրքրել է նաև ֆրանսիացի լուսավորիչ-փիլիսոփաներ Կ. Հելվեցիուսին, Դ. Դիդրոյին և ուրիշներին: Նրանք մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման պահանջի մեջ առանձնացրին հատկապես մտավոր և բարոյական դաստիարակության դերը, գտնելով, որ դրանք իրենց կապերի միջոցով կընդգրկեն այլ բաղադրիչներ: Ի տարբերություն նրանց, Ժ. Ժ. Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ նաև աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի:

Անդրադառնանք նաև հայ դասական մանկավարժների կարծիքներին: Աճող սերնդի արժեքային համակարգի զարգացման մասին գաղափարներ են արտահայտել Դավիթ Անհաղթը, Անանիա Շիրակացին, Հովհաննես Սարգավագը և միջնադարի կրթական այլ գործիչներ: Խ. Աբովյանն էլ ցանկանում էր հիմնել նոր տիպի դպրոց: Նա մեծ տեղ էր հատկացնում մտավոր կրթությանը, բարոյական, գեղագիտական, աշխատանքային և ֆիզիկական դաստիարակությանը: Միքայել Նալբանդյանը դպրոցի վերաբերյալ իր դրույթներից մեկում գրում է. «Դպրոցական կրթությունը պետք է ապահովի երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, համակողմանի զարգացումը, ձևավորի արժեքային համակարգ»[1]: Ղազարոս Աղայանի մանկավարժական գործունեության կենտրոնական խնդիրը եղել է երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, որի համար կարևոր էր համարում մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիարա–կությունը[2]:

1 Մ· Նալբանդյան, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Երևան, 1954, էջ 45,

2 Ղ· Աղայան, Նվեր Մանուկներին, Երևան, 1941, էջ 7,

Նմանատիպ կարծիքներ են հայտնել արևմտահայ անվանի մանկավարժներ Ռ. Պերպերյանը, Հովհ. Հինդլյանը և շատ ուրիշներ։ Մ. Մամուրյանը, Ս. Մանդինյանը ուղղակի պահանջում էին, որ պատանիներն ու աղջիկները դուրս գալով դպրոցից՝ ոչ միայն պետք է ունենան համակողմանի զար–գացում, այլև պատրաստ լինեն կյանք մտնելու համար։

Կարծում ենք, որ այս ամենից կարելի է ենթադրել այն, որ համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ կարող է համարվել նա, ով տիրապետում է գիտությունների հիմունքներին, ունի գիտական գիտելիքների մեծ պաշար, ձևավորված արժեքային համակարգ, աշխարհայացք, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակվածություն և զարգացում, որոնք բանական մարդու մեջ պետք է հանդես գան իրար շաղկապված, փոխկապակցված։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ուսուցման գործընթացում հիմնական գործոնը, որը, մեր կարծիքով, նաև կարևոր գործոնն է՝ հաղորդակցումն է: Գիտնականները գտնում են, որ ուսուցման գործընթացում ցանկացած գործողություններում ուսուցչի գլխավոր նպատակը բովանդակալից հաղորդակցումն է աշակերտների հետ, իսկ աշակերտների նպատակը այդ հաղորդակցմանը հետևելը, իմաստավորելը և իրենց ուսուցչի գործողությունների միջոցով գաղափարների, օրենքների, տեսությունների,

բարոյական նորմերի յուրացումը և արժեքային համակարգի ձևավորումը: Ի. Պ. Պիդկասիստին նշում է, որ ուսուցումը լայն իմաստով հաղորդակցումն է, որի ընթացքում տեղի է ունենում ճանաչողության կառավարումը, հասարակական-պատմական փորձի յուրացումը, այս կամ այն գործունեությանը որոշակի տիրապետումը, որն անձի ձևավորման հիմքն է:

Այսպիսով, ուսուցչի ներգործությունը խթանում է աշակերտի ակտիվությունը, կառավարում այն, նրան դարձնում ակտիվ սուբյեկտ:

ԳԼՈՒԽ **1**

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Մենք կարծում ենք, որ բարոյական հարցերում մեր կայացրած յուրաքանչյուր որոշում ազդում է հասարակության ճակատագրի վրա...

Դեյվիդ Հյում

Առարկայի դասավանդումը, նոր նյութի հաղորդումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեթոդների, որոնք նաև իրենց դերն ունեն արժեքային համակարգի ձևավորման գործում: Անդրադառնանք այն բանին, թե ինչպես են դրանք ազդում մարդու անձի ձևավորման վրա:

Ուսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը. պասիվ, ակտիվ և ինտերակտիվ: Ինտերակտիվ ուսուցման յուրահատկությունն այն է, որ կազմակերպում է այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Ինտերակտիվ ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության: Ուսուցչին մնում է ստեղծագործել, որոնել կիրառել և գտնել ուսուցման իդեալական տարբերակ: Պետք է մշտապես հաշվի առնել այն հանգամանքը, որ անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացումն է հենց ուսուցման գլխավոր նպատակներից մեկը:

---

1 Подласый И· П · , Педагогика (1999), Новый курс, учебник для студ·пед·вузов, М Владос, стр 576,

Պ. Պոդլասին մի առիթով ասել է. «Մանկավարժական տեսությունը վերացություն է: Նրա գործնական կիրառումը՝ միշտ բարձր արվեստ»[1] և ուրեմն փորձենք բացահայտել գործնականորեն ուսուցման միջոցների արդյունավե–տությունը:

Ըստ Սերոբ Խաչատրյանի՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է[1]:

Ուշադրության դրսևորումը համարվում է հետազոտական վարքի, օրգանիզմի հարմարվողական ճանաչողական գործունեության սկիզբը, անհրաժեշտ տեղե–կատվության ընտրությունը[2]:

Ահա սա պիտի նախ հաշվի առնենք ուսուցումը կազմակերպելիս և կարևոր էլ չէ թե ուսուցման որ մոդելի հետ գործն ունենք: Առաջնորդվելով ուսուցման ինտերակտիվ միջոցներով կիրառենք դրանք մեթոդների հետ և գրանցենք արդյունավետությունը:

Ինտերակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, այնպիսի հետաքրքիր հնարներ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Ինտերակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է

ուսուցում գործունեության մեջ: Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ:

---

1 Խաչատրյան Ս. (2020) , Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, էջ 10,

2 Նալչաջյան Ա. Ա. (1997), Հոգեբանության հիմունքներ, Երևան, էջ 56,

Ինտերակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտի, այնպես էլ աշակերտների միջև: Իսկ մեթոդների և հնարների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ստացած գիտելիքները:

Երեխաների մեջ արժեհամակարգ ձևավորելու և զարգացնելու նպատակով, որոշեցիկազմակերպել խմբային աշխատանք:

Ստեղծեցի 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստացան տեքստը և մոտեցան համապատասխան անվանումներով կենտրոններին /խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով/:

Ընտրեցինք հետևյալ կենտրոնները.

• հետազոտողների կենտրոն

• ստեղծագործողների կենտրոն

• գրավոր աշխատանքի կենտրոն

• բացահայտողների կենտրոն

Սովորողներին հնարավորություն տվեցի ընտրություն կատարել: Ես գտնում եմ, որ աշխատանքն այդպես արդյունավետ կլինի:Յուրաքանչյուր աշակերտ ըստ իր համոզմունքների ընտրեց իր խումբը:

Արդյունքում սովորողները սիրով մասնակցեցին այս խմբային աշխատանքին, ցուցաբերեցին ակտիվություն, կարողացան պատասխանել մի շարք հարցերին,

զատել կարևորը երկրորդականից, օգնել միմյանց, կատարել ինչպես ինքնուրույն այնպես էլ խմբային աշխատանք։

Սակայն վերլուծելով արդյունքները, հետադարձ կապի միջոցով հասկացա, որ ոչ բոլոր աշակերտներն էին ակտիվ, ոչ բոլոր խմբերն էին աշխատում արդյունավետ: Այդ պատճառով հանձնարարեցի ինքնուրույն աշխատանք, որտեղ պետք է ներգրավված լինեին նաև ծնողները:

Այս մեթոդը կարելի է կիրառել «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների դասաժամերին։

Իսկ ինքնուրույն աշխատանքի հմտություն ձևավորելը պակաս կարևոր չէ, այդ իսկ պատճառով մշակել եմ առաջադրանքների համալիր մի օրինակ, որի կատարման արդյունքում սովորողները կկարողանան ստեղծել մեդիաարտադրանք, ինչը մոտիվացնող է, ժամանակակից և հետաքրքիր։

1. Հանձնարարել էի նկարահանել տեսանյութ կամ ձայնագրել հարցազրույց տարեկիցների հետ «Ամենից լավ տունը» թեմայով:
2. Ինչպես նաև ընտանիքի կամ նրա անդամների մասին սովորել մեկական բանաստեղծություն, ասմունքել այն, նկարահանել և նվիրել հարազատներին:
3. Համակարգչում առկա ընտանեկան լուսանկարներից ստեղծել իրենց ընտանիքի ալբոմը, անդամներից յուրաքանչյուրին հղել բարեմաղթանքներ, ցանկություններ: Պատրաստել բացիկներ, նկարել իրենց ընտանիքի առօրյան, լուսանկարել ընտանիքի անդամներին:

Դասի մասնակից պետք է դարձնել նաև ծնողներին՝ մի շարք հնարների և միջոցների շնորհիվ, բերենք մեկ օրինակ.

նկար 1

Փոխներգործուն միջավայր է ձևավորվում «ՄԵՐ ՄԵԾ ԵՐՋԱՆԻԿ ՏՈՒՆԸ» խաղի ժամանակ: Ուսուցչի հանձնարարությամբ սովորողները փորձում են կառուցել իրենց «Երջանիկ տունը»: Այս խաղը կարելի է անցկացնել օգտագործելով

«SmartBoard» գրատախտակը: Այն կարելի է հանձնարարել որպես տնային աշխատանք, որի կատարման համար երեխան կարող է խորհրդակցել ընտանիքի անդամների հետ: Ծնողները կարող են իրենց ներդրումն ունենալ՝ առաջարկելով նոր «քարեր», որոնց դասավորությունը կբնորոշի իրենց «ՄԵԾ ԵՐՋԱՆԻԿ ՏՈՒՆԸ»:

Նման տարաբնույթ առաջադրանքների օգնությամբ ծնողներն ակամա մասնակից են դառնում ուսուցման գործընթացին, և ձևավորվում է եռակողմ համագործացություն, ինչը կարևոր պայման է «Դպրոց-ընտանիք» փոխգործակցության համար:

Երբ ծնողը ներգրավված էր դասապրոցեսին, ինքնուրույն աշխատանքին՝ արդյունքն ակնհայտ էր: Բոլորը համախմբված աշխատում էին, ստեղծվել էր ջերմ մթնոլորտ: Եվ մեր դասարանը վերածվել էր մի <<Մեծ Երջանիկ Տան>>:

Ես եկա այն եզրակացության, որ հարկավոր է համագործակցել ծնողների հետ սովորողների դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար, քանի որ ավելի հեշտ է դաստիարակել, քան թե վերադաստիարակել: Վերադաստիարակությունը սովորողների մեջ ոչ ճիշտ կամ ոչ լրիվ ձևավորված բարոյականային հատկանիշների, բնավորության գծերի, սովորույթների, արարքների, վարքի բարեփոխումն ու կատարելագործումն է՝ հասարակության նորմերին համապատասխան, նախապես ճիշտ ընտրված մեթոդների ու հնարների միջոցով[1]:

[1] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան, 2005, էջ 284

ԳԼՈՒԽ **2**

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳԻՐԸ, ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Երեխային երբեք մի՛ սովորեցրեք այն, ինչում ինքներդ վստահ չեք։

Ջ.Ռեսկին

Դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներն իրենց ուրույն տեղն ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման գործում։

Անդրադառնանք հանրակրթական դպրոցի տարրական դասարանների առարկայական ծրագրերին, դրանց սահմանած չափորոշիչներին և այլ արժեհամակարգին, որը կարելի է ձևավորել այդ ծրագրերով։

Ըստ այսօրվա ծրագրերի՝ 1-4-րդ դասարաններում սովորողները ուսումնասիրում են սեփական ներաշխարհը, արժեքները, անձնական ֆիզիկական, մտավոր, հոգևոր, սոցիալական ձեռքբերումները, մարդկային փոխհարաբերություն–ները ընտանիքում ընկերների միջև, իրավունքները և պարտականությունները, հասկանում են՝ ինչ է նշանակում լինել մարդ, ժամանակի և տարածության մեջ կողմնորոշումը, նշանավոր մարդկանց և նշանավոր տոհմերի պատմությունները, ճանապարհորդությունները, հայտնագործությունները, մարդկանց տեղաշարժերը (միգրացիաներ), միջանձնային փոխհարաբերություններն ու կապերը, մարդու և հանրության ստեղծած համակարգերի փոխհարաբերությունները, դրանց կառուցվածքն ու գործառույթները, տնտեսական գործունեությունը և ազդեցությունը մարդու և շրջակա միջավայրի վրա, այն միջոցները, որոնց օգնությամբ մենք արտահայտում ենք մեր մտքերն ու զգացումները, ճանաչում ենք բնությունն ու մշակույթը և արժեքները, այն միջոցները, որոնց օգնությամբ մենք վերլուծում ենք,

ընդարձակում ենք մեր մտահորիզոնը, բավականություն ենք ստանում ստեղծագործելու գործընթացից, բնությունը, նրա օրենքները, բնության, աշխարհի (ֆիզիկական և կենսաբանական) և մարդկային հասարակության փոխհարաբրությունները, ինչպես են մարդիկ կիրառում գիտական հայտնագործությունները, գիտության և տեխնիկայի ազդեցությունը մարդու և շրջակա միջավայրի վրա, մարդկանց և կենդանի էակների միջև մնացորդային ռեսուրսների համար մղված պայքարում ունեցած իրավունքներն ու պարտականությունները, հարաբերությունները, համահավասար պայմանների ստեղծման հնարավորությունները, կոնֆլիկտները լուծելու և խաղաղություն հաստատելու եղանակները և այլն։

Արժեքային համակարգը արդի կրթական ծրագրով ձևավորելու ժամանակ մենք հաշվի առանք մի շարք կարևոր հանգամանքներ.

1. երեխաների բնավորության առանձնահատոկությունները, ուսումնական գործունեության նկատմամբ նրա վերաբերմունքը. ջանասիրություն, փոքրիկ բանաստեղծություններ, երգեր սովորելու նրա ցանկությունն ու ընդունակությունը, հաշվելու, նկարելու, սոսնձելու պարզ առաջադրանքներ կատարելու կարողություններ, որոշակի ժամանակահատվածում միևնույն գործողությամբ զբաղվելու ունակություն և այլն։
2. երեխայի հետաքրքրությունների շրջանակը.ինչո՞վ է սիրում զբաղվել, ինչպե՞ս է անցկացնում ազատ ժամանակը, ի՞նչ խաղալիքներով է սիրում խաղալ, հեռուստատեսային ի՞նչ հաղորդումներ է սիրում դիտել և որքան ժամանակ է անընդմեջ տրամադրում հեռուստատեսությանը, ի՞նչ ստեղծագործություններ է սիրում ունկնդրել, պատմել, ի՞նչ թեմաների շուրջ է սիրում զրուցել, ի՞նչ հարցեր է տալիս և այլն։
3. միջանձնային հարաբերությունները, զգայու՞ն է մարդկանց նկատմամբ, ինչպե՞ս է իրեն պահում տարեկիցների, մեծերի հետ հաղորդակցվելիս, որևէ գործ կատարելիս հաղորդակցվու՞մ է նրանց հետ. ստու՞մ է, հարմարվելու հանդուրծողականության, ապրումակցման որակների առկայությունը և այլն։

4. աշխատանքային կարողությունները. տնային գործերում ունի՞ ոչ բարդ հանձնարարություններ, ինքնասպասարկման, հիգիենայի տարրական կարողություններ, սիրո՞վ է կատարում իրեն հանձնարարված գործերը, սիրու՞մ է մասնակցել հասարակական հանրօգուտ աշխատանքներին և այլն։

5. գեղագիտական հետաքրքրություններն ու կարողությունները. ինչպե՞ս է վերաբերվում երաժշտությանը, նկարելու, ծեփելու ուղղությամբ ինչպիսի՞ կարողություններ ունի, ի՞նչ կինոնկարներ է նախընտրում դիտել, հաճախու՞մ է մանկական թատրոն և կարողանու՞մ է պատմել իր տեսածի մասին, ուշադի՞ր է բնության փոփոխությունների, բնության ձայների և երևույթների նկատմամբ և այլն։

6. ընկերային հարաբերությունները. ինչպիսի՞ երեխաների հետ է սիրում ընկերություն անել. իրենից փոքր, մեծ, ֆիզիկապես ուժեղ թե թույլ, ենթարկվող կամ լիդեր և այլն, ինչպե՞ս է վերաբերվում նրանց, ինչպե՞ս է արտահայտվում ընկերների մասին, ի՞նչն է գնահատում ընկերների մեջ և այլն։

Իհարկե այս հարցադրումը մենք նախատեսել էինք ծնողների համար և պատրաստել էինք կիսափակ հարցաթերթիկներ, որոնք ծնողական ժողովի ժամանակ տվել էինք ծնողներին։

Ուսուցման պրոցեսը, արժեհամակարգի ձևավորումն ու սովորողների դաստիարակությունն անհնար է պատկերացնել առանց ծնող-ուսուցիչ, դպրոց-ընտանիք համագործակցության և, իհարկե, առանց կոլեգաների հետ համագործակցության։ Դրա վառ և լավագույն ապացույցն է մեր հետազոտական աշխատանքը։

Հետագայում, դասապրոցեսի ընթացքում մեր հետազոտության արդյունքները ցույց կտան, թե որքանով են կարևոր «Մայրենի» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաները արժեքային համակարգի ձևավորման պարագայում, ի տարբերություն մյուս առարկաների։

«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արժեքային համակարգը ձևավորվում է մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակվածության արդյունքում:
2. Ուսուցման ճիշտ , համապատասխան մեթոդների ընտրությունը նպաստում են սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը առարկայի դասավանդման ընթացքում:
3. Դպրոց-ընտանիք, ուսուցիչ-ծնող համագործակցությունը նպաստում են սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:
4. «Մայրենի» և «Ես և շրջակա աշխարհը» առարկաներն ամենից համապատասխանն են, իսկ դասավանդվող նյութը ամենից արդյունավետը սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման գործում:
5. Սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման ճանապարհինուսուցման լավագույն տեսակը ինտերակտիվն է:
6. Համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ կարող է համարվել նա, ով տիրապետում է գիտությունների հիմունքներին, ունի գիտական գիտելիքների մեծ պաշար, ձևավորված արժեքային համակարգ, աշխարհայացք, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակվածություն և զարգացում, որոնք բանական մարդու մեջ պետք է հանդես գան իրար շաղկապված, փոխկապակցված:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Ղ. , Նվեր Մանուկներին, Երևան, 1941,
2. Խաչատրյան Ս. (2020) , Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան,
2. Նալբանդյան Մ. , Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Երևան, 1954,
3. Նալչաջյան Ա. Ա. (1997), Հոգեբանության հիմունքներ, Երևան,
4. Подласый И. П . , Педагогика (1999), Новый курс, учебник для студ.пед.вузов, М Владос,
5. www.armedu.am համացանցային կայքը